



**ԱՎԱՆԴԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ ԹԻՎ**  
*հոգուտ երրորդ անձանց /անհատական ֆիզիկական անձանց/*

Ք. \_\_\_\_\_ " " \_\_\_\_\_ 20 թ.

«Արդշինվեստբանկ» փակ բաժնետիրական ընկերությունը, այսուհետ՝ «Բանկ», ի դեմս \_\_\_\_\_

որը գործում է կանոնադրության /լիազորագրի/ հիման վրա, մի կողմից և \_\_\_\_\_

այսուհետ՝ «Ավանդատու», որը գործում է \_\_\_\_\_

մյուս կողմից, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

**1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1. Բանկը, ընդունելով Ավանդատուից դրամական գումարը, այսուհետ՝ «Ավանդ», իրավունք վերապահելով Ավանդատուին ավելացնելու Ավանդի գումարը, պարտավորվում է Ավանդատուին կամ նրա կողմից սույն պայմանագրում նշված երրորդ անձին վերադարձնել Ավանդի գումարը՝ ավելացված Ավանդի գումարով, և սույն պայմանագրով սահմանված պայմաններով և կարգով տոկոսներ վճարել դրանցից վերջինիս կողմից Բանկին սույն պայմանագրով Ավանդատուի իրավունքներից օգտվելու իր մտադրության վերաբերյալ տեղեկացնելու կամ այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու դեպքում:

1.2. Ավանդի գումարը և արժույթը՝ \_\_\_\_\_  
 (գումարը թվերով և տառերով)

1.3. Ավանդի տոկոսադրույթը՝ \_\_\_\_\_ տարեկան:  
 (տոկոսադրույթը թվերով և տառերով)

1.4. Ավանդի վերադարձման ժամկետը՝ " \_\_\_\_\_ " \_\_\_\_\_ 20 թ.

1.5. Ավանդային գործառնությունների կատարման համար Բանկն Ավանդատուի համար բացում է թիվ \_\_\_\_\_ ավանդային հաշիվը: Եթե երրորդ անձը մինչև Պայմանագրի գործողության ժամկետի ավարտը Բանկին գրավոր պահանջ չի ներկայացրել և եթե Պայմանագրի գործողության ժամկետը լրանալիս Ավանդատուն չի պահանջել վերադարձնել Ավանդը և հաշվարկված տոկոսները, ապա այդ գումարը և հաշվարկված տոկոսները փոխանցվում են ցպահանջ ավանդների հաշվին՝ որպես հոգուտ երրորդ անձի ցպահանջ ավանդ՝ առանց լրացուցիչ պայմանագրի կամ համաձայնագրի կնքման: Դրանց վրա հետագա տոկոսների հավելագրումը կատարվում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից՝ սահմանված կարգով, պայմաններով և դրույքաչափով:

1.6. Ավանդը ներդրվում է հոգուտ երրորդ անձի՝ \_\_\_\_\_

/երրորդ անձի անունը, ազգանունը, ծննդյան վկայականի համարը, /

ի դեմս նրա օրինական ներկայացուցչի՝ \_\_\_\_\_

/օրինական ներկայացուցչի անունը, ազգանունը, անձնագրի տվյալները, հասցեն/

անունով ներդրելու պայմանով:

**2. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

2.1. *Բանկը*, նշված ժամկետը լրանալուց հետո, պարտավորվում է վերադարձնել *Ավանդատուին (երրորդ անձին)* Ավանդն այն դրամական միավորով, որով ներգրավված է եղել: Հաշվարկված տոկոսները Ավանդատուին վճարվում են ՀՀ դրամով:

Եթե Ավանդի վերադարձի օրը համընկնում է ոչ աշխատանքային օրվա հետ, ապա վերադարձը կատարվում է ոչ աշխատանքային օրվան հաջորդող առաջին աշխատանքային օրը՝ ոչ աշխատանքային օրերի համար վճարելով տոկոսներ:

2.2. Ավանդի գումարը կարող է լրացվել պայմանագրի գործողության ընթացքում: Այն դեպքում, երբ Ավանդատուն լրացնում է Ավանդի գումարը պայմանագրի գործողության ժամկետի վերջին 30 օրվա ընթացքում, ապա լրացվող գումարի տոկոսների հաշվարկը ՀՀ դրամի համար կատարվում է ելնելով տվյալ օրվա դրությամբ Բանկում գործող մինչև մեկ ամիս «Ավելացվող» ավանդի համար սահմանված տարեկան առավելագույն տոկոսադրույթից, իսկ ԱՄՆ դոլարի համար՝ տարեկան 2 (երկու) տոկոս:

2.3. Պայմանագրի գործողության ընթացքում և հետագայում պահպանվում է Ավանդատուի (երրորդ անձի) և Ավանդի գաղտնիությունը. տեղեկությունները տրվում են միայն օրենքով սահմանված կարգով:

2.4. Ավանդի կանխիկ մուտքագրումը և ավելացումը հավաստվում է բանկային փաստաթղթով (ստորագրված և կնքված դրամարկղի մուտքի անդորրագիր կամ ստորագրված և դրոշմակնքված մեմորեալ օրդեր), առանց որի սույն պայմանագիրը առաջին է: Բանկը պարտավոր է, օրենքով սահմանված կարգով, առնվազն երեսնօրյա պարբերականությամբ Ավանդատուին տրամադրել հաշվի քաղվածք՝ եթե հաշվետու ժամանակահատվածում տվյալ հաշիվը դեբետագրվել (և) կամ կրեդիտագրվել է:

2.5. Ավանդն անկանխիկ ներդրելու կամ ավելացնելու դեպքում (չեկով, վճարման հանձնարարականով, այլ վճարային գործիքով), Ավանդի մուտքագրումը հավաստվում է Բանկի կողմից տրամադրված քաղվածքով: Վերջինս տրամադրվում է Ավանդատուին ոչ ուշ, քան ավանդային հաշվի վրա Ավանդի գումարի մուտքագրմանը հաջորդող բանկային օրը:

2.6. Սույն պայմանագրի 2.4. և 2.5. կետերով նախատեսված քաղվածքները՝ Բանկի և Հաճախորդի միջև ձեռք բերված համաձայնության հիման վրա, տրամադրվում են

- առձեռն
- փոստի միջոցով \_\_\_\_\_ /հասցե/
- էլեկտրոնային կապի միջոցով \_\_\_\_\_ /e-mail/

2.6.1. Ավանդային հաշվից ելքագրումների իրականացման դեպքում հաճախորդին տրամադրվում է քաղվածք՝ 2.6. կետով սահմանված պայմաններով:

2.6.2. Երրորդ անձի կողմից *Ավանդատուի* իրավունքներից օգտվելու մտադրության մասին արտահայտվելու պահից Բանկը երրորդ անձին հանձնում է սույն պայմանագրի 2.6 կետում նշված քաղվածքը:

2.7. Եթե Ավանդը Բանկում ներդրվում է արտարժույթով, ապա Ավանդատուն սույն պայմանագրի ստորագրման և/կամ կնքման փաստով հավաստում է, որ նա գիտակցում է արտարժույթի փոխարժեքի փոփոխման հետևանքով առաջացող հնարավոր անբարենպաստ հետևանքները, և նախընտրում է Ավանդը ներդնել արտարժույթով:

2.8. Բանկային Ավանդի գումարի վրա տոկոսները հավելագրվում են Ավանդը բանկ մուտք լինելու հաջորդ օրվանից մինչև այն Ավանդատուին (երրորդ անձին) վերադարձնելու կամ Ավանդատուի (երրորդ անձի) հաշվից այլ հիմքերով դուրս գրելու օրվան նախորդ օրը: Հավելագրված տոկոսները տարին մեկ անգամ՝ Ավանդի մուտքագրմանը հաջորդող յուրաքանչյուր 365-րդ օրը, կապիտալացվում են Ավանդի գումարին: Բանկը, հանդիսանալով հարկային գործակալ, կապիտալացման ենթակա տոկոսի գումարից՝ համաձայն «Եկամտահարկի մասին» ՀՀ օրենքի, պահում (գանձում) է եկամտահարկի գումարը և այն փոխանցում է պետական բյուջե: Եթե ավանդը ներդրված է արտարժույթով, ապա կուտակված տոկոսագումարը հաշվարկային փոխարժեքով վերածվում է ՀՀ դրամի, գանձվում է վերոնշյալ եկամտահարկը, այնուհետ Բանկի վաճառքի փոխարժեքով վերածվում է արտարժույթի և կապիտալացվում է Ավանդի գումարին:

2.9. Կողմերը համաձայնվում են, որ Բանկը՝ Ավանդի մուտքագրմանը հաջորդող յուրաքանչյուր 732-րդ օրը, վերամայում է պայմանագրի 1.3 կետով սահմանված տոկոսադրույթը՝ համապատասխանեցնելով այն Բանկում տվյալ օրվա դրությամբ գործող 365 օրվա համար սահմանված «Ավելացվող» ավանդի առավելագույն տոկոսադրույթին:

2.10. Երրորդ անձը Ավանդատուի իրավունքներից օգտվելու իրավունք է ձեռք բերում 14 տարեկանը լրանալու և Բանկին այդ իրավունքների վրա հիմնված առաջին իսկ պահանջը ներկայացնելու կամ այդ իրավունքներից օգտվելու իր մտադրության վերաբերյալ որևէ այլ եղանակով բանկին տեղեկացնելու պահից:

2.11. Մինչև երրորդ անձի կողմից *Ավանդատուի* իրավունքներից օգտվելու մտադրության մասին արտահայտվելը, բանկային ավանդի պայմանագիր կնքած անձը կարող է օգտվել ավանդի հաշվում իր ներդրած դրամական միջոցների Ավանդատուի իրավունքից:

2.12. Այն դեպքում, երբ Ավանդը Ավանդատուի (երրորդ անձի) պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին (երրորդ անձին) վճարում է ցպահանջ ավանդների համար Բանկի կողմից սահմանված դրույթաչափով և կարգով ելնելով Ավանդի գումարի (ավելացված գումարի) փաստացի ներդրված օրերի քանակից:

2.13. Այն դեպքում, երբ Ավանդի մի մասը Ավանդատուի (երրորդ անձի) պահանջով վերադարձվում է մինչև սահմանված ժամկետի ավարտը, ապա Ավանդի վերադարձվող մասի նկատմամբ Բանկը տոկոսները հաշվարկում և Ավանդատուին (երրորդ անձին) վճարում է ցպահանջ ավանդների համար սահմանված դրույթաչափով և կարգով՝ ելնելով Ավանդի գումարի (ավելացված գումարի) փաստացի ներդրված օրերի քանակից, իսկ Պայմանագիրը գործում է Բանկի տնօրինության տակ մնացած ժամկետային ավանդի մասով, և դրա դիմաց տոկոսները շարունակվում են հավելագրվել պայմանագրով նախատեսված չափով:

2.14. Հօգուտ երրորդ անձի Պայմանագիրն իրավունք ունեն երկարաձգել Պայմանագրով սահմանված պայմաններով և՛ երրորդ անձը, և՛ Ավանդատուն (եթե մինչ այդ երրորդ անձը Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրություն չի հայտնել): Երրորդ անձը չի կարող Պայմանագիրը երկարաձգել հօգուտ մեկ այլ անձի: Ավանդատուի իրավունքներից օգտվող երրորդ անձի կողմից Բանկին նման պահանջ ներկայացնելու դեպքում ընդհանուր հիմունքներով կնքվում է նոր Բանկային ավանդի պայմանագիր Ավանդի գումարը Բանկի կողմից սահմանված և Պայմանագրով նախատեսված պայմաններով ստանալուց հետո:

2.15. Ավանդի դիմաց հաշվարկված տոկոսները, ինչպես նաև ավանդային հաշվին կանխիկ մուտքագրված միջոցները կանխիկ վճարելիս կոմիսիոն վճար չի գանձվում:

2.16. Պայմանագիրը կնքելիս Բանկն Ավանդատուին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

2.17. Երրորդ անձի կողմից Պայմանագրով նախատեսված Ավանդատուի իրավունքներից օգտվելու մտադրության մասին հայտնելու պահից Բանկը երրորդ անձին հանձնում է «Ֆիզիկական անձանց բանկային ավանդների հատուցումը երաշխավորելու մասին» ՀՀ օրենքով նախատեսված գրավոր ծանուցումը՝ ավանդների հատուցման երաշխավորման պայմանների և կարգի մասին:

2.18. ՀՀ օրենքներում և ենթօրենսդրական ակտերում կատարվող փոփոխությունները, որոնց գործողությունը տարածվում է սույն ավանդային պայմանագրի վրա, ենթակա են պարտադիր կատարման, և կողմերը պարտավորվում են ղեկավարվել կատարված փոփոխություններով:

2.19. Պայմանագիրը կազմված է երկու օրինակից, որոնք ունեն հավասար իրավաբանական ուժ:

2.20. Ավանդային պայմանագրի ժամկետը կարող է երկարաձգվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ այդ պահին Բանկում գործող պայմաններով:

Գումարը (թվերով և տառերով) և արժույթը				
Երկարաձգման ամսաթիվը				
Մարման ամսաթիվը				
Կապիտալացվող տոկոս				
Տոկոսադրույթը (թվերով և տառերով)				
Ստորագրություն	Ավանդատու			
	Բանկ			
<b>Կ. Տ.</b>				

\* Երեք անգամից ավելի երկարաձգումները կկատարվեն պայմանագրի լրացման հիման վրա:

2.21. Ավանդատուն հավաստում է, որ մինչև Պայմանագրի ստորագրումը նախօրոք ծանոթացել է Բանկի կողմից ավանդների ընդունման կարգի դրույթներին և նրանում նշված բոլոր նմուշներին, որոնք փակցված են իրենց համար տեսանելի տեղերում, և լիովին ընդունում է Պայմանագրով անրագրված պայմանները:

**ԲԱՆԿ**

**ԱՎԱՆԴԱՏՈՒ**

Հասցե \_\_\_\_\_

Հասցե \_\_\_\_\_

\_\_\_\_\_

\_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

Հեռախոս \_\_\_\_\_

/ստորագրություն/

/ստորագրություն/